Հավելված
Հաստատված է
«ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ վարչության
2019 թվականի ապրիլի 4-ի N139-L որոշմամբ

Դրամական միջոցների և /կամ դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունքի գրավով ապավովված վարկերի/վարկային գծերի տրամադրման պայմաններ և սակագներ

1. Ընդհանուր պայմանները			
1.1	Վարկի տեսակ	Վարկ	Վարկային գիծ
1.2	Վարկի/վարկային գծի արժույթ	Գրավադրվող դրամական միջոցների արժույթ	
1.3	Վարկի/վարկային գծի առավելագույն գումար	100 000 000 ՀՀ դրամ կամ 200 000 ԱՄՆ դոլար/Եվրո կամ 15 000 000 Ռուբլի	
1.4	Տարեկան տոկոսադրույք[1]	Ավանդի դիմաց վճարվող տոկոսադրույք +2%	
1.5	Վարկային գծի չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	-	0%
1.6	Վարկի/վարկային գծի տրամադրման առավելագույն ժամկետ	Ավանդի ներդրման ժամկետ	
1.7	Վարկի/վարկային գծի մարման եղանակ	1. **Անուիտետային**՝հավասարաչափ մարումներով 2. **Արտոնյալ՝** տոկոսագումարների վճարումն ամսական, իսկ մայր գումարինը՝ ժամկետի վերջում 3. **Զսպանակաձև՝ մայր գումարի վճարումն ամսական հավասարաչափ մասերով, իսկ տոկոսագումարներինը՝ ամսական**	1. Տոկոսագումարների մարումը մինչև յուրաքանչյուր ամսվա **15**-ը միևնույն ամսվա **1**-ի դրությամբ կուտակված տոկոսների հանրագումարի չափով, 2. Մայր գումարի մարումը՝ **ժամկետի վերջում:**

[1] Որպես ակցիա ԱՄՆ դոլարով վարկերի/վարկային գծերի դեպքում տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է ավանդի դիմաց վճարվող տոկոսադրույք +0.5%: Ակցիան նախատեսված է մինչև 05.04.2019թ դրությամբ Բանկում ԱՄՆ դոլարով ավանդ ներդրած հաճախորդների համար և գործում է մինչև 30/06/2019թ.:

1.8	Վարկային գծի մարման արտոնյալ ժամանակահատված	-	<u>Մինչև 45 օր</u> նախորդ ամսվա ընթացքում վարկային գծի անկանխիկ օգտագործված գումարների նկատմամբ (բացառությամբ քարտից քարտ փոխանցումների, Բանկ-Հաճախորդ համակարգի միջոցով ներբանկային և միջբանկային փոխանցումները ՀՀ տարածքում և սեփական հաշիվների միջև) տոկոսներ չեն հաշվարկվում, եթե հաճախորդը վերը նշված եղանակով վարկային գծի օգտագործված մասի մարումը կատարի մինչև ընթացիկ ամսվա 15-ը
1.9	Վարկի/վարկային գծի մարման նվազագույն/առավելագույն սահմանաչափ	չի սահմանվում	
1.10	Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	95%	
1.11	Վարկի տրամադրման եղանակ	▪ Ընթացիկ հաշվի միջոցով, ▪ Բանկի կողմից թողարկվող վճարային քարտի միջոցով (*արտարժույթով վարկերը տրամադրվում են միայն վճարային քարտերով)*	
1.12	Վարկային գծի տրամադրման եղանակ	Բանկի կողմից թողարկվող՝ վճարային քարտի միջոցով	
1.13	Ապահովվածություն	Հաճախորդի կամ այլ անձի (ֆիզիկական, իրավաբանական անձ կամ Ա/Ձ) կողմից Բանկում ներդրված դրամական միջոցներ և/կամ դրամական միջոցների նկատմամբ պահանջի իրավունք	
1.14	Վարկի/վարկային գծի ժամկետի երկարաձգում	Վարկի/վարկային գծի ժամկետը կարող է երկարաձգվել վարկի վերջնաժամկետից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ հաճախորդի կողմից ներկայացված դիմումի հիման վրա, վարկի ժամկետի երկարաձգման օրվա դրությամբ Բանկում գործող տվյալ վարկատեսակի պայմաններին համաձայն, եթե վարկառուն 1) Բանկում գործող վարկային պարտավորությունների գծով չունի ժամկետանց պարտավորություններ և 2) Վարկի երկարաձգման օրվա դրությամբ վարկառուի գործող վարկերի դասը համապատասխանում է «Ստանդարտ» դասին	
2. *Վարկառուի նկատմամբ պահանջները*			
2.1	Կարգավիճակ	Ֆիզիկական անձ	
2.2	Տարիքային սահմանափակում	Վարկառուն վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ չպետք է 18 տարեկանից պակաս լինի	
2.3	Վարկային պատմության նկատմամբ պահանջը (դրական վարկային պատմություն)	1. Վարկառուն վարկի դիմումի ընդունման օրվա դրությամբ չպետք է ունենա ժամկետանց/դասակարգված պարտավորություններ 2. Վարկի երկարաձգման օրվա դրությամբ վարկառուի գործող վարկերի դասը համապատասխանում է «Ստանդարտ» դասին	

3. *Տույժեր, փուգանքները*		
3.1.	Ժամկետանց վարկի գծով օրական	0.1%
3.2.	Ժամկետանց տոկոսագումարի գծով օրական	0.1%
3.3.	Վարկի վաղաժամկետ մարման համար	Չի սահմանվում
3.4.	Վարկի վաղաժամկետ մարում պահանջելու հիմքեր	Բանկն իրավասու է պահանջել վարկի վաղաժամկետ մարում, եթե՝ ա) վարկի ստացման համար ներկայացված տեղեկությունները կեղծ կամ անարժանահավատ են, բ) վարկառուն չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները, գ) ֆինանսաբանկային համակարգում առկա կետանցված պարտավորությունների հետևանքով Բանկի կողմից վարկի գծով ձևավորվել է հատուկ պահուստ
4. *Վճարային քարտի և բանկային հաշվի սակագները*		
4.1.	Քարտի տեսակ	Բանկի կողմից թողարկվող ցանկացած տեսակի վճարային քարտ բացառությամբ Visa Classic և Visa Gold տեսակների՝ ըստ հաճախորդի ցանկության
4.2.	Վճարային քարտի սակագներ	համաձայն Բանկում գործող սակագների
4.3.	Բանկային հաշվից վարկի գումարի կանխիկացման վճար	Չի սահմանվում
5. Այլ պայմանները		
5.1.	Վարկի/վարկային գծի մերժման գործոնները	1) բացասական վարկային պատմությունը (համաձայն սույն պայմանների 1.14 և 2.3 կետերի), 2) հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվությունը, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից Բանկին տրամադրված/հայտարարված տեղեկությունները, 3) հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվությունը, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը, 4) այլ հիմքեր:
5.2.	Վարկի/վարկային գծի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը	2 աշխատանքային օր

5.3.	Որոշման մասին տեղեկացնելու ժամկետը	որոշման կայացումից հետո 1 աշխատանքային օր
5.4.	Վարկի/վարկային գծի վարկառուին տրամադրելու ժամկետը	որոշման կայացումից հետո 1 աշխատանքային օր, բացառությամբ քարտային վարկերի, որոնց դեպքում՝ 3 աշխատանքային օր
5.5.	Որոշման վավերականության առավելագույն ժամկետը	15 աշխատանքային օր
5.6.	Վարկի դիմումի ընդունման, ձևակերպման և տրամադրման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր

<u>Ծանոթություն</u>

Վարկի մայր գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսագումարները վարկառուի ցանկությամբ կարող են վճարվել նաև վարկի արժույթով: